



**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA**  
**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2654  
 Ապրիլ 11, 1997

Արժանաշնորհ  
 Տ. Գարեգին Ա. Քհնյ. Գասպարեան  
 Հովի Ա. Յակոբ Եկեղեցոյ  
 Նախագահ Ծխական Խորհուրդի  
 Փըրշէյս

Սիրելի Տէր Գարեգին,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 7, 1997 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 16, 1997-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Մաք Պէյզըլ  
 Լայնըլ Կոլսթըն  
 Փօլ Քէյիշեան  
 Լիսա Գուգուճեան  
 Արա Մոմճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք Թեմական Կանոնադրութեան բարեփոխուած թիւ 142 յօդուածը, որուն համաձայն «Ընտրել Հաշտեցննիչ Յանձնախումբ մը երեք հոգիներէ բաղկացած: Իւրաքանչիւր անդամ պիտի ծառայէ երեք տարի, մէկ անդամը պիտի ընտրուի երեք տարուան համար, մէկ անդամը՝ երկու տարուան համար եւ մէկ անդամը՝ մէկ տարուան համար: Մինչեւ որ պաշտօնավարութեան շրջանը վերջանայ՝ պաշտօնները երեք տարուան շրջանի կը վերածուին»: Այս յօդուածին համաձայն՝ Միւսա Տատըրեան (45 քուէ) ընտրուած կ'ըլլայ երեք տարուան, Պէթի Սալպաշեան (44 քուէ) երկու տարուան եւ Ալիս Սաքալեան (38 քուէ) մէկ տարուան համար: Յաջորդ տարի պիտի ընտրուի մէկ անդամ, Ալիս Սաքալեանի տեղ, երեք տարուան շրջանով:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

*Խաճապ Արք. Դարսասեան*

ԽԱԺԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Առաջնորդ